

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Արմավիրի մարզի Լուսազյուղի գյուղապետի 2013թ. 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

2013թ. հուլիսի 10-ին, ժամը 14<sup>00</sup> - ին տեղի ունեցավ Լուսազյուղի գյուղապետի 2013թ 1-ին կիսամյակի հաշվետվությունը:

Նիստին մասնակցում էին ավագանու անդամները, համայնքի 35 քնակիչներ և Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ ՏԻ և ՀԳՍՍ վարչության պետ՝ Արսեն Դուկասյանը:

Ձեկ. գյուղապետ՝ Սարիբեկ Կարապետյան

2013թ. Լուսազյուղ համայնքի վարչական բյուջեով հաստատվել են տարեկան եկամուտներ, ընդամենը՝ 19352,5 հազ. դրամ, որից՝

ա/ հողի հարկ	3600,0 հազ. դրամ,
բ/ գույքահարկ	1101,3 հազ. դրամ,
գ/ վարձակալական հողի հարկ	300,0 հազ. դրամ,
դ/ դոտացիա	14141,2 հազ. դրամ,
ե/ տեղական տուրք	210,0 հազ. դրամ,

2013թ. Լուսազյուղ համայնքի ֆոնդային բյուջեով հաստատվել են տարեկան եկամուտներ, ընդամենը՝ 5983,3 հազ. դրամ, որն առաջացել է տարեսկզբի ազատ մնացորդից:

2013թ. 1-ին կիսամյակի վարչական բյուջեի եկամուտները հաստատվել և կատարվել են հետևյալ չափերով, ընդամենը՝ հաստատվել է 8325,6 հազ. դրամ.

կատարվել է 8091,6 հազ. դրամ կամ 97,2 %-ով, որից

1. հողի հարկը հաստատվել է 700,0 հազ. դրամ՝

կատարվել է 641,5 հազ. դրամ կամ 91,6 %,.

2. գույքահարկը հաստատվել է 380,0 հազ. դրամ՝

կատարվել է 266,5 հազ. դրամ կամ 70,1 %,

3. վարձակալ, հողի հարկը հաստատվել է 70,0 հազ. դրամ՝

կատարվել է 0,0 հազ. դրամ կամ 0 %,

4. դոտացիան հաստատվել է 7070,6 հազ. դրամ՝

կատարվել է 7070,6 հազ. դրամ կամ 100%,

5. տեղական տուրքեր հաստատվել է 105,0 հազ. դրամ՝

կատարվել է 95,0 հազ. դրամ կամ 90,5 %,

6. այլ ոչ հարկային եկամուտների պլան չի հաստատվել,

կատարվել է 18,0 հազ. դրամ,

2013թ. 1-ին կիսամյակում ֆոնդային բյուջեի մուտք են եղել՝

1. պետական բյուջեից մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգման համար՝ 10,0 մլն դրամ,

2. հողի օտարումից մուտք՝ 558,2 հազ. դրամ:

2012թ. 1-ին կիսամյակի եկամուտները հաստատվել և կատարվել են հետևյալ չափերով՝

ընդամենը՝ հաստատվել և 1-ն կիսամյակում 8770,4 հազ.դրամ

կատարվել է 7328,6 հազ. դրամ կամ 83,6% , որից՝

1. հողի հարկը հաստատվել է 2000,0 հազ. դրամ՝

կատարվել է 956,5 հազ. դրամ կամ 47,8 %,

2. գույքահարկը հաստատվել է 550,0 հազ. դրամ՝

կատարվել է 268,7 հազ. դրամ կամ 48,9 %,

3. վարձակալ, հողի հարկը հաստատվել է 150,0 հազ. դրամ՝

կատարվել է 28,0 հազ. դրամ կամ 18,7 %,

4. դոտացիա հաստատվել է 6040,4 հազ. դրամ՝  
կատարվել է 6040,4 հազ. դրամ կամ 100%,
5. տեղական տուրքեր հաստատվել է 30.0 հազ. դրամ՝  
կատարվել է 30.0 հազ. դրամ,
6. այլ ոչ հարկային եկամուտներ պլան չի հաստատվել,  
կատարվել է 5.0 հազ. դրամ:

Սեփական եկամուտները 2013թ. 1-ին կիսամյակում հաստատվել են 1255,0 հազ. դրամ, կատարվել է 1021,0 հազ. դրամ կամ 81,3 %:

Սեփական եկամուտները 2012թ. 1-ին կիսամյակում հաստատվել են 2730,0 հազ. դրամ, կատարվել է 1288,2 հազ. դրամ կամ 47,2 %:

2013թ. 1-ին կիսամյակի սեփական եկամուտների պլանը 2012թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակասել են 1475,0 հազ. դրամ: Փաստացի եկամուտները պակասել են 267,2 հազ. դրամ:

2013թ հողի հարկի փաստացի եկամուտը 2012թ. համեմատությամբ պակասել է 315,0 հազ. դրամով, գույքահարկի գծով եկամուտը՝ 1,3 հազ. դրամով, վարձակալական հողի հարկը պակասել է 28,0 հազ. դրամով, տեղական տուրքը ավելացել է 65,0 հազ. դրամով, ոչ հարկային եկամուտը ավելացել է 13,0 հազ. դրամով:

2013թ. 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ ծախսերը՝ տեղական ինքնակառավարման ապարատի պահպանման համար.

ա/ աշխատավարձ	4441,3 հազ. դրամ,
բ/ կապի ծառայություն	18,8 հազ. դրամ,
գ/ գրասենյակային նյութեր	26,5 հազ. դրամ,
դ/ ներքին գործուղում և ծառ. ուղևորութ.	36,0 հազ. դրամ,
ե/ էլեկտրալներգիա	97,0 հազ. դրամ,
զ/ տրանսպորտային նյութեր	200,0 հազ. դրամ,

է/ համակարգչային ծառայություն	31,8 հազ. դրամ,
ը/ ընդհանուր բնույթի ծառայ.	56,0 հազ. դրամ,
թ/ սարքավորումների ընթ. նորոգում	82,0 հազ. դրամ
ժ/ տեղեկատվական ծառայություններ	69,6 հազ. դրամ:

Սոց. ապահովագրության ծրագրերով տրվել են ֆինանսական օգնություն համայնքի նյութապես վատ վիճակում գտնվող տասնհինգ բնակիչների, այդ թվում՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակցի, գոիված ազատամարտիկի ծնողի, արցախյան պատերազմի հաշմանդամի ծնողի, ընդամենը՝ 645,0 հազ. դրամ:

Աղբահանության աշխատանքների կատարման համար 2013թ. 1-ին կիսամյակում ծախսվել է 400,0 հազ. դրամ:

Մայիսի 9-ի տոնի առթիվ միջոցառում կազմակերպելու համար ծախսվել է 200,0 հազ. դրամ:

Նախադպրոցական կրթության ծրագրով տրվել է դրամաշնորհ «Լուսազյուղի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ին 160,0 հազ. դրամ:

2013 թ. 1-ին կիսամյակի ընթացքում գյուղապետարան մուտք է եղել 42, ելք՝ 47 փաստաթուղթ:

Հրավիրվել և անցկացվել է ավագանու 5 նիստ:

Ընդունվել է գյուղապետի 11 որոշում և արձակվել՝ 30 կարգադրություն:

Արձակվել է աշխատակազմի քարտուղարի 15 հրաման:

Քաղաքացիներին տրվել են 120 տեղեկանքներ:

Չնայած կատարված աշխատանքներին համայնքում չյուծված գերկարևորագույն խնդիրներից է մնացել.

1. նոր դպրոցի կառուցումը,
2. խմելու ջրի մեկ խորքային աղբյուրի հորատումը,
3. մանկապարտեզի շենքի կապիտալ վերանորոգումը:
4. կենտրոնական ճանապարհի կապիտալ նորոգումը՝ 550 գծ.մ. երկարությամբ:

Լուսազյուղի գյուղապետ



*[Handwritten signature]*

Ս. Կարապետյան

Աշխատակազմի քարտուղար

*[Handwritten signature]*

Մ. Առաքելյան